

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ /8-րդ դասարան - Խնդիրներ 2/

1. Եթե քառանիշ թվին ձախից կցագրեն 5, իսկ աջից՝ 2, ապա կստանան սկզբնականից 99 անգամ մեծ թիվ: Գտե՛ք այդ քառանիշ թիվը:
2. 67891253 թվից ջնջե՛ք հնարավորինս քիչ թվանշաններ այնպես, որ ստացված թիվը բաժանվի 36-ի:
3. 55 մետաղադրամից մեկը կեղծ է: Երկու կշռումով պարզե՛ք՝ կեղծ մետաղադրամը ծա՞նր է, թե՞ թեթև՝ իսկականից:
4. Ճշտախոսների և ստախոսների քաղաքների բնակիչները հաճախ իրար հյուր են գնում: Ի՞նչ հարցով կարող է այդ քաղաքներից մեկում հայտնված ճամփորդն այդ քաղաքների առաջին իսկ հանդիպած բնակչից պարզել, թե ո՞ր քաղաքում է գտնվում՝ ճշտախոսների՞, թե՞ ստախոսների:
5. Գտե՛ք  $x^2 + 6x - 24 = y^2$  հավասարման բնական լուծումները:
6. Գրիչը մատիտից 25%-ով թանկ է, իսկ տետրից՝ 20%-ով էժան: Քանի՞ տոկոսով է մատիտը տետրից էժան:
7. Երեք ամաներ լցված են ջրով: Երբ առաջին ամանի ջրի 40% լցրին երկրորդի մեջ, այնուհետև երկրորդում ստացված ջրի 25% երրորդի մեջ, և վերջապես, երրորդում ստացված ջրի 30% առաջին ամանի մեջ, ապա առաջին ամանում եղավ 27 լ ջուր, երկրորդում՝ 24 լ, երրորդում 28 լ: Սկզբում քանի՞ լիտր ջուր կար յուրաքանչյուր ամանում:
8. Ուղղանկյուն եռանկյունը տրոհել երկու մասի այնպես, որ ստացված մասերը վերադասավորելով հնարավոր լինի կազմել ուղղանկյուն:
9. Հավասարասրուն եռանկյան սրունքին տարած բարձրությունը 24 սմ է, իսկ հիմքը՝ 25 սմ: Գտե՛ք եռանկյան սրունքը և հիմքին տարած միջնագիծը:
10. ABCD զուգահեռագծի կողմի վրա վերցրած M կետը: Ապացուցե՛ք, որ MAD եռանկյան մակերեսը հավասար է MAB և MCD եռանկյունների մակերեսների գումարին: